



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ- ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ,
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՌԱՐԿԱ - Մաթեմատիկա

ՀԵՂԻՆԱԿ- Կարինե Գևորգյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - <<ՀՀ Գեղարքունիքի մարզի
Սևանի Յա. Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Դասավանդման գործընթացի տարբերակումը և արդյունքերի մոդելավորումը
3. Սահմանումներ ուսուցման վերաբերյալ
4. Դասարանային դասավանդման հիմնախնդիրներ
5. Ակտիվ ուսումնառություն
6. Գործնական աշխատանքների կազմակերպումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում
 - 6.1 Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքներ
 - 6.2 Տեսական գիտելիքը հիմնավորող և ամրապնդող գործնական առաջադրանքեր
 - 6.3 Հետազոտական բնույթի գործնական առաջադրանքներ
7. Եզրակացություն և առաջարկություն
8. Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարասկզբում գիտատեխնիկական առաջընթացը, տեղեկատվական հասարակությունում երիտասարդ սերնդի ակտիվ դաստիարակությունն ու ուսուցումը դարձել են ժամանակի ելակետային պահանջ:

Հասարակության զարգացումը կախված է այն բանից, թե ինչպիսին է նրանում ուսուցման և դաստիարակության դրվածքը: Կրթության ռազմավարական նպատակները սերտորեն կապված են հասարակության զարգացման հիմնախնդիրների հետ: Կրթության ժողովրդավարական համակարգի ստեղծումը լիարժեք և որակյալ կրթության համար պայմաններ է երաշխավորում: Կրթության համակարգը կոչված է ապահովել.

- սերունդների պատմական ժառանգորդությունը ,
- ազգային մշակույթի պահպանումը, տարածումն ու զարգացումը,
- համաշխարհային մշակույթի յուրացումը և միջանձնային հարաբերությունների զարգացումը,
- երիտասարդության ամբողջական աշխարհընկալման և ժամանակակից գիտական աշխարհայացքի ձևավորումը,
- ստեղծագործական կարողությունների զարգացումը,
- տեղեկատվական հասարակության և նոր տեխնոլոգիաների զարգացման պայմաններում մասնագիտական աճի ունակ մասնագետների պատրաստումը:

Կրթությունն իրապես ժողովրդավարական խնդիր է: Այն միայն սովորել-գիտենալ , սովորել-գործել կամ սովորել-լինել չի նշանակում, այլ նաև՝ սովորել – միասին ապրել և , հետևապես, կառուցել վաղվա հասարակությունը:

Դպրոցի որակի և արդյունավետության բարձրացումն ակնառու կերպով պետք է դրսևորվի աշակերտների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և արժեքային համակարգի աճի մեջ:

Սույն հետազոտությունը նվիրված է դասավանդման գործընթացի կառավարմանը և վերահսկողությանը, ինչպես նաև գործնական աշխատանքների կազմակերպմանը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում:

2. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ

Ուսուցիչները տարբեր ոլորտներում իրենց մասնագիտական պարտականությունները արդյունավետ իրականացնելու համար կարիք ունեն անընդհատ և համակողմանի օժանդակության :Դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու համար նրանց անհրաժեշտ են բազմաբնույթ գիտելիքներ:

Հաջող դասավանդման բնորոշ պայմանը **պլանավորումն** է. դասերը պլանավորելիս ուսուցիչները կայացնում են **մակրոորոշումներ**` դասավանդման բովանդակության, թեմայի վրա ծախսվող ժամանակի, տրվելիք առաջադրանքների և յուրացումն գնահատելու ձևերի վերաբերյալ: Ուսուցիչների այս որոշումները միմյանց են կապում նպատակները, բովանդակությունը և ռազմավարությունները: Դասավանդման ընթացքում պլանների իրագործմանը համընթաց ուսուցիչները կայացնում են **միկրոորոշումներ**, օրինակ, թե ինչպիսի գաղափարներ պետք է ուսուցանել առաջին հերթին, դասարանի որ՝ աշակերտներին պիտի դաս հարցնել, գովեստի ինչ խոսքեր պիտի գործածել ճիշտ պատասխանների դեպքում կամ ինչպիսի ուղղորդիչ հետադարձ կապ է անհրաժեշտ, երբ աշակերտները նյութը չեն ըմբռնում: Այս միկրոորոշումները ներառում են դասավանդման արդյունավետ եղանակների կիրառություն, պահ առ պահ, մինչ ուսուցիչներն իրականացնում են

ուսումնական ծրագրի պլանները և փոխհամագործակցում աշակերտների հետ դասարանում:

Արդյունավետ դասավանդմանը վերաբերող այդ մակրո և միկրոորոշումները քննարկելիս ուսուցիչները և ղեկավարները ներգրավվում են մի գործընթացում, որը անվանում են գործնական գիտելիքների և հմտությունների փոխանակություն:

Իրենց մասնագիտական աճի և զարգացման խնդիրներով մտահոգ ուսուցիչների համար խիստ կարևոր է նպատակների և խնդիրների իրականացման ուղղությամբ անընդհատ մտորելը: Դասավանդման իրենց նախորդ փորձը քննելով և դրա շուրջ անընդհատ խորհելով ուսուցիչները բացահայտում են դասավանդման գործընթացում փոփոխություններ կատարելու գաղափարներ: Խորհրդածությունն ուսուցիչներին հանգեցնում է դասարանի իրական պատկերը զանազան տեսանկյունից դիտարկելուն, ինչի շնորհիվ ճանաչում են դասարանի իրական պատկերը զանազան տեսանկյուններից դիտարկելուն, ինչի շնորհիվ ճանաչում են դասարանի նրբերանգները և աշակերտների հետ առավել արդյունավետ համագործակցում:

Ղեկավարները , օգտագործելով ուսումնական պլան կազմելու իրենց գիտելիքները և արդյունավետ դասավանդման գործելակերպերը, կարող են օգնել ուսուցիչներին ոչ միայն դասավանդումը պլանավորելիս, այլև այդ ուսումնական պլանները դասարանում տարբեր սովորողների հետ իրականացնելիս:

Ղեկավարների կարևորագույն դերերից մեկը ուսուցչի կատարողականի (գործունեության արդյունքների) գնահատումն է , պակաս կարևոր չէ նաև դասավանդման կատարելագործման համար ուսուցիչներին օգնություն տրամադրելը:

Դասավանդման գնահատումը ծառայում է երկու նպատակի՝ նախ, նպաստել դասավանդման շարունակական կատարելագործմանը և ուսուցիչների մասնագիտական աճին՝ ընթացիկ տեկեկատվություն տրամադրելով , երկրորդ, պատկերացում կազմել մեկնաբանելու, դատողություններ անելու կամ որոշումներ կայացնելու կատարողականի մակարդակի վերաբերյալ:

Կարևոր է ընդունել, որ դասավանդման գնահատումը բարդ խնդիր է . սակավաթիվ ուսուցիչներ, ղեկավարներ կամ վարչական աշխատողներ են լիովին բավարարված իրենց դպրոցում կամ ուսումնական համայնքում ներկայումս գործածվող եղանակներից:

Ուսուցչի գործունեության արդյունքների գնահատումը ընտրողական գործընթաց է, որը ներառում է տեղեկատվության հավաքում ուսուցիչների և դասարանում աշակերտների հետ նրանց փոխհարաբերությունների մասին:

Դասավանդման գնահատում կատարելիս պետք է առաջին հերթին օգտագործել դասարանային դիտարկումներից հավաքած տվյալները:

3. ՍԱՅՄԱՆՈՒՄՆԵՐ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսուցումը գործունեության տեսակ է , որը ներառում է մտածողություն նպատակների և միջոցների, ինչպես նաև հետևանքների մասին, և գործի է դնում պլանավորման ընթացքում ստեղծված հավաքական տեղեկատվությունը: Ուսումնական պլանների կատարումը առավել հայտնի է որպես դասավանդում: Ինչ վերաբերում է ուսումնական գործի ղեկավարմանը, գոյություն ունեն բազմաթիվ սահմանումներ: **Ուսուցումը** դիտվում է որպես բարոյական գործունեություն նպատակների, միջոցների և դրանց հետևանքների մասին: Ուսուցումը կիրառական գիտություն է, որն ածանցվում է մարդկային վարքի հետազոտությունից և օգտագործում հոգեբանության , նյարդաբանության, սոցիոլոգիայի և մարդաբանության տվյալները:

Ուսուցման արվեստն արտացոլվում է ուսուցչի արժեքային համակարգում, ոճում, կենսափորձում, վերացական մտածողության մակարդակում, ինչպես նաև դասարանային համագործակցության պայմաններում: Ուսուցման գիտությունը նկատվում է դասավանդման ռազմավարություններում , կառավարման և գնահատման ընթացակարգերում, հաղորդակցման հմտություններում, դասապլաններում, ինչպես նաև տեսությունների և ուսուցման ու յուրացման

մողելների իմացության մեջ: Այս տարրերը, միանալով և մասամբ համընկնելով, մեծացնում են ուսուցչի աշխատանքի արտադրողականությունը:

Ուսուցման արվեստը և գիտությունը

Դիագրամը՝ ըստ Վենի

Արվեստը

- Արժեքներ, համոզմունքներ,
 - վերաբերմունքներ
- ՈՃ(ստեղծագործական մտածողություն, Անցյալի կենսափորձ
- Վերացական մտածողության

Հաջողված

ուսուցիչ

Գիտությունը

- Դասավանդման ռազմավարություններ
- Դասարանի կառավարման ընթացակարգեր
 - Գնահատման ընթացակարգեր
- Արդյունավետ հաջորդականություն
 - Դասալսումներ

Նախաձեռնելու մի երկխոսություն, որը դասարանի բոլոր աշակերտներին ներգրավում է ուսումնական աշխատանքներում: Ուսուցումը լինի դա արվեստ թե գիտություն, թե երկուսն էլ միաժամանակ, դիտարկում ենք որպես բարդ և խրթին աշխատանք, որը գործնականում կիրառում է պլանավորման ընթացքում ստեղծված տեղեկատվությունը:

4. Դասարանային դասավանդման հիմնախնդիրներ

Ղեկավարները , հիմնվելով դասավանդման և յուրացման վերաբերյալ իրենց սեփական գիտելիքների և փորձի վրա, պետք է նաև տեղյակ լինեն դասավանդման այն բազմաթիվ հիմնախնդիրներին, որոնք ընդհանուր են ուսուցիչների համար, հատկապես՝ սկսնակների կամ նոր հանձնարարություն ստացածների: Այդ 8 հիմնախնդիրներն են՝

1. նպատակի և ուղղության սահմանումը,
2. աշակերտների գնահատումը,
3. սխեմայի և հաջորդականության կազմումը և պահպանումը,
4. ուսուցման ռազմավարությունների ընտրությունը,
5. դասավանդման սահմանափակումների ճանաչումը և վերացումը,
6. գործառությունը դպրոցի մշակութային միջավայրում,
7. բազմակի պարտականությունների ստացումը և կատարումը,
8. որպես ուսուցիչ հաջողության հասնելը:

Եթե այս հիմնախնդիրներից յուրաքանչյուրը գիտակցորեն չի քննվում, ապա դասավանդման ընթացքում կարող են ծագել խնդիրներ: Ղեկավարները, ուսուցիչների հետ շփվելիս կարող են օգնել նրանց մտորել այդ հիմնախնդիրներից շատերի շուրջ և սկսել մտածել դրանց լուծման ուղիների մասին: Դասավանդման մասին խորհրդածելիս ուսուցիչները տեղեկանում են հնարավոր տարբերակներին և սկսում ցուցադրել իրենց << մասնագիտական գիտելիքները >>: Ուսուցիչներն ավելի վստահ են դառնում դասավանդելիս, ընդլայնում են ուսուցման ռազմավարությունների և հմտությունների իրենց ցանկը և արդյունքում դասավանդմանն ու յուրացմանն առընչվող բազմաթիվ հիմնախնդիրներ նվազում են:

5. Ակտիվ ուսումնառություն

<<Ո՞րն է ուսուցման ամենից արդյունավետ մեթոդը>>, հարցի լավագույն պատասխանն այն է, որ դա կախված է նպատակից, աշակերտից , ուսուցանվող նյութի բովանդակությունից և ուսուցչից:

Չաջորդ լավագույն պատասխանն է՝ << երբ աշակերտները իրենք ուսուցանում են այլ աշակերտների>>:

Ուրբերթ Զ. Մըքքիչի

Ամենից հաճախ ավանդական դասարաններում աշակերտները սոսկ պասիվ կերպով են ներգրավված ուսումնառության գործում, այսինքն՝ լսում են դասավանդողին , դիտում երբեմն-երբեմն ցուցադրվող սլայդը կամ ընթերցում դասագիրքը: Նման պասիվ ներգրավվածությունը սովորաբար հանգեցնում է աշակերտների կողմից գիտելիքների սահմանափակ մտապահման: Սակայն վերափոխելով նյութի մատուցման ձևերը, դասավանդողները կարող են ստեղծել մի միջավայր, որում գիտելիքների մտապահումը զգալիորեն կաճի: Նման իրադրությունները պահանջում են նաև աշակերտների մասնակցությունը: Լավագույն գործընթացներից մեկը, այսպես կոչված ակտիվ ուսումնառության իրագործումն է:

Ուրեմն ինչ բան է ակտիվ ուսումնառությունը: Պարզ ասած, դա աշակերտներին ուղղակիորեն և անուղղակիորեն ներգրավվելն է բուն ուսումնառության գործընթացում: Սա նշանակում է, որ սոսկ խոսքով կամ տեսողական տեղեկատվություն ստանալու փոխարեն աշակերտները դառնում են և՛ մասնակից, և՛ կատարող: Ակտիվ ուսումնառությունը աշակերտներին որևէ գործում ներգրավելն է՝ բացի դասախոսություն լսելուց և նշումներ կատարելուց, որոնք հետո օգնում են նրանց յուրացնել յուրացնել և կիրառել դասընթացի նյութը: Աշակերտներին կարելի է զբաղեցնել այնպես, որ նրանք միմյանց հետ զրուցեն և միմյանց լսեն, կամ գրեն, ընթերցեն և խորհրդակցեն ինքնուրույն:

Ակտիվ ուսումնառության արդյունքում կկատարելագործվեն.

- աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը

- աշակերտ-աշակերտ համագործակցությունը
- ակադեմիական առաջադիմությունը (գնահատականները)
- հաղորդակցման հմտությունները
- բարձր մակարդակի մտածողության հմտությունները
- թիմային աշխատանքը
- վերաբերմունքն առարկայի հանդեպ և սովորելու շահագոգնվածությունը:

Առավելությունն այն է, որ`

- առանձին աշակերտներ կարող են խորանալ մի խնդրի մեջ և հանձնվել, մինչդեռ աշակերտների խմբերը հակված են կանգ չառնել և առաջ շարժվել` փնտրելով լուծման ուղիներ ,
- աշակերտներն առիթ են ստանում շփվելու հիմնախնդիրների լուծման այլընտրանքային ռազմավարությունների հետ,
- աշակերտները հնարավորություն են ստանում միմյանց հարցեր տալ և դրանց պատասխանել,
- աշակերտները լավագույնս սովորում են, երբ իրենք են ուսուցանում:

6. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի աշակերտներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Գործնական աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է`

- նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք իմանան ոչ միայն տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,

- ապահովվի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով(ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգավվի այդ աշխատանքում,
- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

Մաթեմատիկայի գործնական աշխատանքներն իրենց էությամբ, բնույթով և նպատակով մոտ են ուսումնական մյուս առարկաների լաբորատոր աշխատանքներին :Մաթեմատիկայի գործնական առաջադրանքները կարելի է հանձնարարել ինչպես թեմայի ուսուցումը սկսելուց առաջ, այնպես էլ թեմայի ուսուցումն ավարտելուց հետո:

6.1 ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքները կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը և կարող են օժանդակել աշակերտին ինքնուրույն հանգել տեսական այն հետևություններին, որոնց մասին խոսք է գնում ուսումնական թեմայում: Որպես կանոն, դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում:Դրանք գնահատման ենթակա չեն:

1. Հավասար են արդյոք՝ ABCD և MNKL պատկերների մակերեսները:



բ)



2. Կար

ա) հավասար են արդյոք՝ ABCD և MNKL պատկերների մակերեսները,



բ) եթե բազմանկյունը բաղկացած է մի քանի բաղադրիչ բազմանկյուններից, ապա նրա մակերեսը հավասար է բաղադրիչ բազմանկյունների մակերեսների գումարին:

6.2 ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ԵՎ ԱՄՐԱՊԵՆՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Այս խմբի մեջ կարելի է դասել բոլոր այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել այս կամ այն տեսակի հմտության ձևավորմանը (թվաբանական գործողությունների կատարում, հանրահաշվական արտահայտությունների ձևափոխում և պարզեցում, տրված նախնական պայմաններին բավարարող մոդելների պատրաստում, երկրաչափական պարզագույն կառուցումների վրա հենված խնդիրներ, շրջապատող առարկաների բնութագրիչների չափում և դրանցով պայմանավորված հաշվարկներ և այլն):

6.3 ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Այս խմբի մեջ կարելի է դասել այն առաջադրանքները, որոնց կատարումը պահանջում է ինքնուրույն հետազոտության իրականացում, երևույթների կամ օբյեկտների հատկությունների, օրինաչափությունների, փոխադարձ կապերի բացահայտում և մաթեմատիկական հիմնավորում: Նման առաջադրանք հանձնարարելիս որպես հուշում կարելի է տալ երևույթի կամ օբյեկտի ընդհանուր մեկնաբանությունը, նրանում նկատվող որոշակի օրինաչափությունները:

Գործնական առաջադրանքի տեսակը հիմնականում պայմանավորվում է նրա ձևակերպմամբ , ձևակերպման մեջ առկա տվյալներով և դրանցով պայմանավորված՝ պահանջով, աշակերտի (կամ աշակերտների, եթե խմբային է) կարողությունով և այլ հանգամանքներով:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվեց դասավանդման գործընթացի կառավարման և վերահսկողության եռթյունը: Դա սկսվեց դասավանդման բարդությունների քննարկմամբ, որում ընդգրկվեցին ուսուցման սահմանումները և հայացքները: Այդ սահմանումները ներառում էին ուսուցումը որպես արվեստ և ուսուցումը որպես գիտություն, քանի որ ուսուցման և յուրացման ռազմավարությունները հատվում են ուսուցչի արժեքների կամ համոզմունքների համակարգի հետ: Քննարկվեցին ուսուցմանն առնչվող մի քանի ընդհանուր հիմնախնդիրներ, որոնց համար ղեկավարները պետք է լուծումներ գտնեն, երբ նոր ուսուցիչներին օգնում են բարելավել դասավանդման արդյունավետությունը: Առաջի չորս հիմնախնդիրները (նպատակների և ուղղության սահմանում, գնահատման անցկացում, սխեմայի և հերթականության մշակում և պահպանում, դասավանդման ռազմավարությունների ընտրություն) ուղղակիորեն առնչվում են դասարանային ուսուցմանը: Մնացած չորս հիմնախնդիրները (դասավանդման գործում առկա սահմանափակումների ճանաչում և վերացում, գործառություն տվյալ դպրոցի միջավայրում, բազմակի պարտականությունների ստանձնում, հաջողության ձեռքբերում) պակաս անմիջաբար են կապված դասավանդմանը և յուրացմանը, սակայն դարձյալ ներգործում են ուսուցչի դասավանդման արդյունավետության վրա: Ղեկավարները երբեմն դժվարությամբ են հավասարակշռություն պահպանում օգնողի և գնահատողի դերերի միջև:

Առաջարկում եմ , այդ երկակի դերերից գնահատման փուլին պետք է առաջնություն տրվի կադրային հիմնահարցերի կամ ամփոփիչ որոշումների

նկատմամբ: Ղեկավարները պետք է առավել գործուն դեր խաղան ուսուցչի դասավանդման , գնահատման ընթացիկ և ամփոփիչ փուլերում, ապա նրանք պետք է որոշումներ կայացնեն՝ հիմնվելով ոչ միայն դասարանային դիտարկումների ընթացքում հավաքված ընթացիկ տվյալների վրա, այլև օգտագործելով ուսուցիչների խորհրդակցությունները, թղթապանակները և դեպքերի վրա հիմնված մեթոդները: Որևէ գնահատման համակարգի վերջնական նպատակը ուսուցչի շարունակական աճն է և ուսուցում- ուսումնառություն բնութագրերի զարգացումը, որոնց արդյունքը աշակերտների ակադեմիական ուսումնառության մակարդակի բարձրացումն է:

7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Դպրոցի ղեկավարում և կառավարում >> Ս. Խրիմյան, Ա. Հովսեփյան
2. <<Մաթեմատիկայի ուսուցիչների մասնագիտական զարգացման , վերապատրաստման դասընթացների ուղղույց>> Ս. Հակոբյան, Վ. Ոսկանյան, Ռ